ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (Պ-239-25.07.2019-ՊԱ-011/0) վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկների

Առաջարկության հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը նոր 1.1-ին մասով լրացնելու փոխարեն նախագծով նախատեսված կարգավորումները սահմանել նույն հոդվածի 1-ին մասում:	Չի ընդունվել:	Չի ընդունվել:
ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 1.1-ին մասում և նախագծի ամբողջ տեքստում «բջջային հեռախոսով» բառերը փոխարինել «տեխնիկական միջոցով» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 7.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «ֆիզիկական անձին» բառերը փոխարինել «հավելվածում գրանցված անձին» բառերով, իսկ «համակարգչային ծրագրի» բառերը՝ «համակարգի» բառով: Նույն կետից հանել «մեխանիկական» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 7.3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «օնլայն» բառը փոխարինել	Ընդունվել է:	Ընդունվել է:

		«առցանց» բառով, 2-րդ մասը «(նկարագրությունը)» բառից հետո լրացնել «, ինտերֆեյսը» բառով, իսկ 3-րդ մասը «ֆիզիկական անձանց համար» բառերից առաջ լրացնել «և հանրային ծառայության համարանիշ ունեցող կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք ունեցող» բառերով:		
ՀՀ Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 7.4-րդ հոդվածում «բջջային հեռախոսին» բառերն անհրաժեշտ է փոխարինել «բջջային հավելվածի միջոցով՝» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 7.5-րդ հոդվածի 1-ին մասում «ենթարկված» բառն անհրաժեշտ է փոխարինել «ենթակա» բառով և հանել «այլ» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 7.4-րդ հոդվածի 2-րդ մասը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախատեսել կարգավորում օրենքի ընդունումից հետո այն 6 ամիս հետո ուժի մեջ մտնելու մասին:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Կառավարություն		Նախագծում անհրաժեշտ է նախատեսել դրույթներ՝ ֆիզիկական անձանց կողմից տրամադրված տեսանյութերը միանգամից ոչնչացնելու վերաբերյալ, որոնց հիմքով որոշումներ չեն կայացվում:	Չի ընդունվել:	Չի ընդունվել: